Արդեն երրորդ տարին անընդմեջ Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի օրհնությամբ, կազմակերպվում է ՀՀ տարբեր շրջանների երեխաների հյուրընկալությունը Սևծովյա քաղաքում և նրանց ամառային հանգստի ուրախ և հետաքրքիր անցկացումը:

2018 թվականին ևս չխախտվեց Վիրահայոց թեմի Բաթումիի «Սուրբ Փրկիչ» եկեղեցու ավանդույթ դարձած այս բարեգործական նախաձեռնությունը: Ամառային շոգ օրերին Սև ծովի ափին անցկացրած արձակուրդի օրերը անմոռանալի դարձան Գեղարքունիքի մարզի տարբեր շրջանների այն 16 անչափահասների համար, ովքեր թեմի Մարտունու շրջանի հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Գևորգ քահանա Տեր-Բարսեղյանի գլխավորությամբ օգոստոսի 28-ից առ սեպտեմբերի 4-ը հյուրընկալվեցին Քոբուլեթիում, վայելեցին ծովի զովությունը ու առափնյա քաղաքի գեղեցկությունը:

Աջարիայի, Գուրիայի և Իմերեթիի հայության, Բաթումի «Սուրբ փրկիչ» եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Արարատ քահանա Գումբալյանի կազմակերպչական և

նախաձեռնողական ջանքերի արդյունքում, ապահովվեց Գեղարքունիքի երեխաների տեղափոխությունը և կեցությունը հյուրանոցներում, նաև շրջագայությունը Բաթումիում և Քոբուլեթիում:

Ուրախ և հետաքրքիր էր օրը նաև Վիրահայոց թեմի Ալեքսանդր Մանթաշյանց կրթամշակութային և երիտասարդական կենտրոնում: Կենտրոնի տնօրենի, ուսուցիչների և ակտիվիստների նախաձեռնությամբ, հայաստանցի դեռահասների համար կազմակերպվեցին խաղեր, մրցումներ, նաև հանդիպումներ և քննարկումներ: